# ՅԻՇԱՏԱԿ

# ԵՐ. ՏԵԱՌՆ ԿՈՄԻՏԱՍԱՅ

## ՆԱՀԱՏԱԿԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

(1707, Հոկտ. 25=Նոյեմ. 6)



(Իսկատիպ ձեռագիր Վկայիս, յամի 1691.)

ՎԵՆԵՏԻԿ — Ի Ս. ՂԱԶԱՐ

1893

# Ի ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԿԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ասացեալ Հ. Մանկ. Վ. Պետրոսեան Եւդոկիացւոյ ( + 1756 )

Ի թուականիս մերոյ Փրկչին
Հազար եւ վեց հարիւրին,
Յարիւր եւ եօթն այլ աւելի
Ի քսան եւ վեց հոկտեմբերի,
Զանու գպրոսակս յաւուր տօնի
Բախլիդեայ եւ Դեմետրի.
Յորում աւուր սա վրկայեալ
Արեամբ սըրոյ նահատակեալ.
Ղենական լուսով լցեալ
Ցերկրէ յերկինըս փոխադրեալ.
Սուրբըս պայծառ մեծայարգու
Որ ի քաղքէս Կոստանդինու,
Տէր Կոմիտաս անուամբ պատուեալ
Եւ քահանայ աւագ կարգեալ.
Երեւելի բանիւք վկայեալ,
Ցաստուածաշունչ գիրըս վարժեալ.
Փրկական գրանըն քարոզեալ,
Ճշմարտութեան ջատագով լեալ.
Այն որ յուղղափառ հաւատ սնեալ,
Ցոր յԱքրայէս մեր հաստատեալ.
Նոյն քահանայ աստուածարեալ,
Վասն Յիսուսի արեամբ ներկեալ.
Նըմանեցաւ կենաց Փրկչին,
Կըցորդ եղեւ մահու խաչին։
Ուրախութեամբ մեծաւ լցաւ՝
Զվըճիռ մահուն իբրեւ լըւաւ.
Սա յորդորեաց զընդ իւր կապեալսն.
« Որդեակք, անմահ արքցուք բաժակս,
Վորոյ տանջանքս ըոպէական,
Որով տանամք գկեանս անվախճան.
Վասըն Փրկչին համբերեսցուք,
Զեռամբ նորին պըսակեսցուք.
Արիութեամբ զբաժակն արբցուք,
Մահուանըն Տեառն կցորդ լիցուք » ։



ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ ԱՌԱՋԻ ԴԱՏԱԽՈՐԻՆ

(ՊԱՏԿԵՐԵԱԼ ՅԱՄԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ)



*Իսկատիպ ինքնաբուղխ ինքնագիր ըղձից Երանելոյ Տեառն Կոմիտասայ։*

# ԱՂԱՉԱՆՔ

## ԱՌ ՆՐ. ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ.

Ճշմարտութեան սիրող և քարոզ, ո՜վ երանելի Նահատակ, ահա հասար փափագանացդ, զոր այնքան տարիներ յառաջ, անշուշտ Հոգւոյն Սրբոյ ազդմամբ, զգայիր և գրէիր, բայց թերեւս ոչ կարծէիր. ահա նոյն Ս. Հոգին բորբոքեց միտքդ, զօրացուց սիրտդ, որ հասար քու գովաբանած արեամբ վկայելոցն, անոնց հաւատքն ու վարդապետութիւնը՝ քու եռանդեամբդ և արեամբդ կրկին հաստատես, և մեր հին հայրենի Ս. Վկայից պսակին՝ անթառամ ծաղիկ մ'այլ աւելցնես և աւելնաս, որոյ անմահարար հոտն բուրէ և պիտի բուրէ յաւիտեան։

Սիրողք պատուողք և պարծողք ծիրանեփայլ Նահատակիդ, զքեզ բարեխօս ունիմք առ պսակողն քո Քրիստոս, զլուխնիս և սրտերնիս դնելով ի վերայ երբեմն արիւնաներկ մարմնոյդ պահող Գերեզմանին, և աղաչեմք. որ եթէ յերկրի՝ փափագելով արժանացար մարտիրոսաց դասակցութեան, հիմայ հզօրագոյն երկնաւոր մաղթանօքդ խնդրես Իրմէ՝ և ընդունիս մեզի ալ, թէ ոչ նման քեզ արեամբ նահատակութիւն ի՝ վերայ սուրբ և ուղղափառ հաւատոց, այլ մինչեւ ի մահ հաստատութիւն ի նոյն և ի սէր Քրիստոսի. և փոխանակ մի անգամ բոլորական զոհ ըլլալու, օգնէ և զօրացու զմեզ՝ քու ազգակիցքդ, որ բիւր անգամ սիրով նուիրենք կեանքերնիս՝ մեզի Տուողին, ուղիղ դաւանութեամբ, քրիստոնավայել վարքով և բարքով, համբերութեամբ և ընկերսիրութեամբ, ըստ օրինակի Սրբոց, և մանաւանդ Քո, ո՜վ սիրելի և պաշտելի Պաշտպան մեր, երանաշնորհ վկայ Քրիստոսի, ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ։

№ 53647

Ծամեալ խմբից օտարական՝
Եղեն յորդորք ուրացութեան.
Դարձուցին զմիտս ողորմելեաց
Եւ շըրջեցին ի կոյս իւրեանց։
Այլ մինչ առ Սուրբն եկեալ հասին՝
Որ կայր ի գուձս, աղաչեցին,
Զղտորել զմիտսըն ջան եղին.
Նՙր, ասեն, ոչ խնայես անձին։
Երանելին յոյժ զօրացեալ՝
Սաստեաց ի նոսա զայս ասացեալ.
« Տուողին ինձ զկեանս իմ՝ շնորհեմ.
Հեղուլ զարիւնս իմ ոչ խնայեմ »։
Եհեղ զարիւն իւր պատուական.
Ուղղափառաց եղեւ պարծան.
Եւ զի հեղմամբ արեան նորին՝
Խռովութիւնք բարձան ընաւին.
Հիւսեաց հեղմամբ իւրոյ արեան
Ուղղափառաց խաղաղ ըզկեանս.
Դադարեցոյց զահն բռնական,
Զսուր եւ զտոյժն անպարտական։
Ողորմելի վըկայք սորին
« Զարաչար զկեանս վըճարեցին։...
Յորմէ այլոցըն խըրատեալ
Դառն արտասուօք ապաշխարեալ,
Աղերսանօք առ Նա դիմեալ
Եւ բարեխօս ըզնա կալեալ։
Սորա զմարմինըն պատուական
Բարձեալ Յունաց՝ եդին ի տապան.
Անտուստ բարձեալ ըզգանձն անգին՝
Ի Կաղղիա փոխադրեցին.
Ցնծութիւն մեծ եղեւ նոցին
Ի յընդունել զնորին մարմին։
Երկունք ցաւոց փարատեցան,
Երկիւղք դիւաց հալածեցան։
Արուսեակ մեծ սա ծագեցաւ,
Ազգիս Հայոց պարծանք ցուցաւ.
Լուծաւ սովաւ մեզ եւտիքեան.
Լոյս սա ցուցաւ ճշմարտութեան։



ԴԻՐ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԵՐ· ՏԵԱՌՆ ԿՈՄԻՏԱՍԱՑ

Ի ՍԱՄԱԹԻԱ ԹԱՂ Կ· ՊՈԼՍԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220059647